

ՃԵՄԱՐՈՅ ԲԱՐԵԿԱՄԸ



Ատենով մարդ մ'ունէր երեք բարեկամ.
Գրամ, կին եւ իր բոլոր գործերը բարի:
Երբ մահուան դառն ու ժանտ վայրկեանը հասաւ,
վերջին բարեւ մը տալ ուզեց ամենուն:
Նըշան ցաւիս, դրամն ըսաւ այսպէս անոր,
Կը վըճարեմ ծախքը Թաղմանդ համդիսին:
— Եւ ես կու գամ՝ իբրը սիրոյս արտայայտ՝
Հետեւելու մինչ գերեզմանդ, ըսաւ կինն:
Իսկ երրորդն ալ — Մի սուր ողջոյն հրաժեշտի
վասնն զի մահն ըզմեզ բաժնել կարող չէ,
Կրնաս ատոր վստահ ըլլալ, բարեկամ....

Մարդը մեռաւ. դրամը լոկ միմ մը տըլաւ.
Կինը յուլարկ ընկերացաւ ամուսնոյն.
Իսկ բարեկամն ըստոյգ՝ տարաւ գինքն երկինք:....

ՍՔԱՐԱՎԻԻ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՋԱԻԼԵՆ ՍԻՒՐՄԷԼԵԱՆ. — Լոյս զուարթ (քեր-
թուածներ). Փարիզ 1924:

Մարմնող երեկորի մը յետին ծուէններ,
որ կարօտի և բուռն տենչանքի մեղամաղձ
թախիծը ծրարելով իրենց ծոցին մէջ՝
կ'երթան կը մեռնին հեռու հայրենի ա-
փեր....

« Լոյս զուարթ ». Կիրականամուտի աղօ-
տալոյս կանթնդն է արդեօք որ հիւանդա-
գին կը պլլալայ համատարած աղօթարանին
մէջ, մի միայն բաղձանքի իւղով բորբո-
քուած. սակայն մեզ հասած Լոյս զուար-
թը, երփներանգ ծաղկներով հիւսուած
Լոյսի զուարթ փունջ մ'է, կարօտի և հայ-
րենարազութեան վճիտ կաթիլները թեր-

թերուն վրայ. Մայր բնութեան անծայր
էջերուն ծաղկենկար զարդեր են, նոր՝
բայց խանդոտ գրիչէ մը յօրինուած:

Խորհրդապաշտ և նկարագրական տողեր,
գրեթէ մանկական շեշտով՝ բայց զոգտրիկ
և զունագեղ պատկերներով և վառվռուն
երեակայութեան ցուրերով:

Թէպէտ յառաջարանին մէջ խրոխտ և
աննուաճ ոգի մը կը ցուցնէ Պ. Զաւէն
Միրմէլեան քանի մը նամակներով, սա-
կայն ոտանաւորները գրեթէ հակոռոնայ
հոգի մը կը ցուցնեն, ոչ թէ սրով, այլ սիրով
կը թափառի հայրենի աւերակներու վրայ,
Երասխի կաթնածոր լուսնին տակ. « Այս-
պէս հանդարտ կու գամ ման Լուսաւորչի
Աստղին տակ » « Խաչ քարերու սո՛ւրբ
աշխարհ »:

Հոն կը փնտռէ յիշողութեան լոկ աղօտ կանթեղի լոյսով իր տունը. և տխուր երգերով յանուանէ կը կանչէ.

« Իմ տունըս երգ մ'է որուն բառերն այլեւս չունիմ
« Իմ տունըս եմք մ'է անուշ զոր կը սիրեմ միտ մինակ...

« Յետոյ կու լամ խնթի պէս... »

Ու հրապըս կը մարեմ որ լտեմնէ՝ զիս Աստուած,

Հեղինակը աւելի գեղջկական պարզունկ կեանքին սիրահար է քան քաղաքի ժխուրին, « Ուր արեւ կարծես խեղդուած խոշոր թռչուն մըն է փռշիւն ու մուխին մէջ, և կուպրի հոտ մը մարդուն ունեզբը կ'այրէ » — Այս 32 էջոց գրքոյկին մէջ կարելի է գրեթէ տուն մը ոտանաւոր գտնել ուր ցանկալի գիւղը չյիշուի. և ամէն մի ոտանաւոր մեկամագծ յանկերգով մը հասկաթուռ ցորեններու դրուատիք կ'ընէ, ու միշտ խնթ փափաքով կ'այրի.

« Կ'ուզեմ որ ըլլամ ցորենի արտին

« Ծաղիկը կարմիր՝ զաւթ արեւին...

« ...

« Ըլլամ զեղի չին կամուրջ մը փայտէ...

« ...

« Ըլլամ կուրծքի խալն աղջկան բողբոկ...

« Բակի լակոտ մը՝ նայող հանգարակի...

« Փուշե մը ներքեւ աղօթեմ ու լամ՝

« Որ քեզ մը զոնէ իմ ցուլը մոռնամ...

« Այլեւս Աստուած, արտին մէջ ըլլամ,

Այսպէս վառ պատկերներով ողջ գոյներով կը ներկայացնէ բնութեան զանազան տեսարաններ, առանց ծամածուռ դարձուածքներու, առանց բառերու տաղտկալի կուտակումին, առանց բռնագրօսիկ տողերու:

Բնութեանն ելած նոր բարունակ մ'է, որուն ուրիշ բան չենք մաղթեր՝ եթէ ոչ ողջ սկզբունքներով զարգանալ. և վեր,

շատ մը բանաստեղծներու խուրին վրայէն սաւառնիլ, անհաս կապոյտին մէջէն Հայրենիքին նորաշունչ տողերով հրեղէն պըսակ մը բերելու:

Հ. Վ. ՅՈՋԱՆԱՆՅԱՆ



ՀԱՅՐԵՆԻՔ. — Ամսագիր (գրական), Պոսթոմ.

Ասկէ երեք տարի առաջ « Հայրենիք » օրաթերթի խմբագրութիւնը մեծ և զնահատեղի քայլ մը կ'առնէր. հրապարակական կեանքի պատկերին հետ կը պատրաստէր հայութեան ծաւալի մտքին ազնուագոյն և օգտակար սնունդը, գրական էջեր համուն ամսագրով:

Քիչ ժամանակի մէջ « Հայրենիք » առաջնակարգ դիրք մը գրաւեց հայ թերթերուն մէջ՝ թէ՛ իր ընտիր նիւթերով և թէ՛ պատկառելի ծաւալով: Բաժանորդներու ստուար բազմութիւնը (մօտ 3000ի) արդէն մեծագոյն զնահատանքն և իրախոյն էր հայութեան, թերթի մը համար որ հանրամատչելի ըլլալու պատիւը կ'ունենար:

Մեր հարազատ երկրին մէջ լոյս տեսած խորթ թերթերուն հակառակ՝ « Հայրենիք » ամէն շրջանակի մէջ փնտռուած թերթին է. պատճառն անշուշտ յայտնի է. ազատ ու զարգացած մթնոլորտի ծնունդ ըլլալով, ազատօրէն կը սահի հոն գրիչը, ու ազատօրէն կը սաւառնի հայ միտքը իր բովանդակ բեղունութեան մէջ: Ազգային արդի զրահակութիւնն է որ կը մշակուի հօն. ուղղութիւնն է կապարակագործումը հինին՝ յաւելումով նորին որ գեղեցիկ է և օգտակար:

Երկայն պիտի ըլլար թուել ընտիր էջեր որ « Հայրենիք »-ը կը գեղերփնեն. հայ գրագէտներու մեծ շարք մ'է, որ կ'երևնայ